



ԱՐՑԱԽԻ ՆԵՐԳՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2009 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան.....	3
1. Արցախի ներդրումային հիմնադրամի ամրապնդում ու գործունեության ընդլայնում.....	5
2. ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն.....	6
2.1 ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցություն.....	7
2.2 ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման աջակցություն.....	9
3. ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն....	14
4. ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի /մատուցվող ծառայությունների/ շուկաներում առաջնդմանն աջակցություն.....	15
5. ՓՄՁ սուբյեկտների մոտ նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն.....	16
6. Հիփոթեքային վարկավորմամբ բնակարան /առանձնատուն/ ձեռք բերելու կամ վերանորոգելու ֆինանսական աջակցություն.....	17
6.1 Հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում.....	17
6.2 Հիփոթեքային վարկերի կանխավճարների նպատակային փոխառությամբ տրամադրում.....	23
6.3 Հիփոթեքային վարկավորմամբ իրացնելու նպատակով բնակարանների /առանձնատների/ կառուցում.....	23
7. Հիփոթեքային փոխառություններ գյուղաբնակ քաղաքացիներին.....	25
8. Նպատակային ծրագրեր.....	27
9. Մոնիթորինգ.....	27
10. Հիմնադրամի գործունեության ֆինանսական ցուցանիշները.....	28

## Նախարան

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրությունը (այսուհետ՝ ՓՄՁ) ստանալով պետական աջակցություն զարգանում է, իր նշանակալի ազդեցությունը թողնելով երկրի տնտեսության զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա: 2008 թվականին արձանագրված տվյալների համաձայն ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում կազմել է 29%, 2007 թվականի 26%-ի դիմաց, ստեղծվել են մոտ 213 նոր ՓՄՁ սուբյեկտներ: ՓՄՁ սուբյեկտներում ներգրավված աշխատողների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում 2008թ. կազմել է 47.9%՝ 2007թ. 45,8%-ի դիմաց: ԼՂՀ տնտեսավարող սուբյեկտների ընդհանուր թվաքանակում ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը կազմել է 97.5%, որոնց բաժինը արտադրության ծավալում կազմել է 52.7%՝ 2007 թվականի 45%-ի դիմաց:

2009 թվականի ընթացքում շարունակվել է վերոհիշյալ ցուցանիշների դինամիկ աճը:

ԼՂՀ-ում տարեցտարի ամրապնդվում է ՓՄՁ պետական աջակցության համակարգը, ընդլայնվում են ՓՄՁ սուբյեկտներին ցուցաբերվող պետական աջակցության ձևերը, ծավալներն ու աշխարհագրությունը, կատարելագործվում են աջակցության տրամադրման մեխանիզմները և ընթացակարգերը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ՓՄՁ պետական աջակցության ծրագիրն իրականացնող հիմնական կառույցը Արցախի ներդրումային հիմնադրամն է /այսուհետ՝ Հիմնադրամ/, որի գործունեության շրջանակներում իրականացվում են Արցախում ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված ծրագրային միջոցառումներ՝ ՓՄՁ սուբյեկտներին ցուցաբերելով աջակցություն հետևյալ ուղղություններով.

- ֆինանսական,
- տեղեկատվական,
- խորհրդատվական,
- ուսուցողական:

Հիմնադրամը հանդիսանում է մաս կիսող քաղաքացիներին վարկավորմամբ ԼՂՀ քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման պետական ֆինանսական աջակցության ծրագիրն իրականացնող մարմինը:

Արցախի ներդրումային հիմնադրամը /պետ. գր. N44416011309 առ 01.11.2007/ իր գործունեությունն իրականացնում է Ստեփանակերտ քաղաքի Տիգրան Մեծի 25 հասցեում գտնվող գրասենյակի միջոցով:

Հիմնադրամի կանոնադրական նպատակներն են.

- ԼՂՀ սոցիալ-տնտեսական տարբեր բնագավառների զարգացմանը նպաստելը,
- սկսնակ և գործող տնտեսավարող սուբյեկտներին աջակցություն տրամադրելը:

Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

- հոգաբարձուների խորհուրդը,
- կառավարիչը՝ գլխավոր տնօրենը:

Հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինը հոգաբարձուների խորհուրդն է: Խորհուրդը գլխավորում է խորհրդի նախագահը, որն ի պաշտոնե ԼՂՀ վարչապետն է: Խորհրդի անդամներն ի պաշտոնե՝ ԼՂՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարն է, ԼՂՀ փոխվարչապետ, ֆինանսների նախարարը, ԼՂՀ գյուղատնտեսության նախարարը, ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարը:

Հիմնադրամի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է գլխավոր տնօրենը:

Հիմնադրամի կառուցվածքը համապատասխանում է միջազգային պրակտիկայում օգտագործվող որակի կառավարման և մասնագիտացման սկզբունքներին: Այն ենթադրում է հիմնադրամի կողմից իրագործվելիք ռազմավարական խնդիրների ծրագրավորում և փուլային կատարում՝ համապատասխան հսկողություն և վերահսկողություն իրականացնելով առանձին փուլերի ամփոփ ցուցանիշների և երևույթների նկատմամբ:

Հիմնադրամի կառուցվածքի հիմնական գործառնական մասը բաժանված է երկու ուղղությունների՝ ծրագրերի նախապատրաստում և սպասարկում, որոնք համակարգվում են գլխավոր տնօրենի երկու տեղակալների կողմից: Առաջին ուղղությունն ընդգրկում է

հիմնադրամի կողմից իրագործվելիք ծրագրերի մշակման և նախապատրաստման աշխատանքներն, ինչպես նաև ընթացակարգային, մեթոդաբանական և վերլուծական հարցերը, երկրորդը՝ ծրագրերի տեղադրման, սպասարկման և ընթացիկ հսկողության հետ կապված աշխատանքները: Որակի կառավարման նպատակով սպասարկվող ծրագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկությունները, սահմանված պարբերականությամբ, ենթակա են վերլուծության՝ ծրագրի նախապատրաստման աշխատանքները համակարգողի կողմից:

Հիմնադրամի շահառուներին տրամադրվող աջակցության նպատակայնության վերաբերյալ հարցերի քննարկման, մոնիթորինգի արդյունքների գնահատման և հիմնադրամի գործունեության հետ կապված այլ հարցերի քննարկման ու համապատասխան որոշումների ընդունման նպատակով հիմնադրամում գործում է կոլեգիալ մարմին՝ Հիմնադրամի ֆինանսական կոմիտեն՝ կազմված Հիմնադրամի պատասխանատու աշխատողներից:

Հիմնադրամի շահառուների կողմից ԼՂՀ համապատասխան օրենսդրության և ի կատարումն ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև պայմանագրերով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է վերահսկողության ծառայության կողմից:

Հիմնադրամի ֆինանսական միջոցների շրջանառության նկատմամբ հսկողությունը՝ բոլոր ծրագրերով եկամուտների և ծախսերի /ֆինանսավորումների/ հաշվառումը, ներդրված դրամական միջոցների վիճակագրությունը և արդյունավետության վերլուծությունը իրականացնում է հիմնադրամի ֆինանսահաշվային ծառայությունը:

Հիմնադրամի 2009 թվականի պետական աջակցության ծրագրերի անվանացանկն ընդգրկում էր հետևյալ ծրագրերը.

1. ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցության ծրագրեր, այդ թվում՝

1.1 ՓՄՁ սուբյեկտների կապիտալի ֆինանսավորման ծրագիր,

1.2 ՓՄՁ սուբյեկտների արտադրական հզորությունների վերազինմանն աջակցության ծրագիր,

1.3 ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ծրագիր,

1.4 ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցության ծրագիր,

1.5 ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի /մատուցվող ծառայությունների/ շուկաներում առաջնդմանն աջակցության ծրագիր,

1.6 ՓՄՁ սուբյեկտների մոտ նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցության ծրագիր,

1.7 ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագիր,

1.8 ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցության ծրագիր:

2. Հիփոթեքային վարկավորմամբ բնակարան ձեռք բերելու կամ վերանորոգելու պետական ֆինանսական աջակցության ծրագիր, այդ թվում՝

2.1 հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում,

2.2 նպատակային փոխառությամբ հիփոթեքային վարկերի կանխավճարների տրամադրում,

2.3 հիփոթեքային վարկավորմամբ իրացնելու նպատակով բնակարանների /առանձնատների/ կառուցում:

3. Հիփոթեքային փոխառություններ գյուղաբնակ քաղաքացիներին:

4. Նպատակային ծրագրեր:

# 1. Արցախի ներդրումային հիմնադրամի ամրապնդում ու գործունեության ընդլայնում



2009 թվականին Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից ձեռնարկված քայլերը ուղղված են եղել ԼՂՀ-ում ՓՄՁ ոլորտի զարգացման, ԼՂՀ քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման պետական աջակցության ծրագրերով նախատեսված համապատասխան միջոցառումների իրականացմանը, ինչպես նաև հիմնադրամի ամրապնդմանը, որի շրջանակում աշխատանքներ են իրականացվել Արցախի ներդրումային հիմնադրամի գրասենյակի նյութատեխնիկական հագեցվածության ապահովման ուղղությամբ:

Աշխատանքներ են իրականացվել հիմնադրամի աշխատողների աշխատատեղերը համակարգչային տեխնիկայով, գրասենյակային կահույքով, գրենական պիտույքներով և կապի միջոցներով համալրման, ինչպես նաև աշխատողների մասնագիտական կարողությունների, հմտությունների զարգացման ուղղությամբ:

Նպատակ ունենալով բարձրացնել պետական աջակցության ծրագրերի իրականացման արդյունավետությունը և ապահովել աջակցության նպատակայնությունն ու հասցեականությունը՝ հիմնադրամը շարունակական քայլեր է ձեռնարկում աջակցության ցուցաբերման մեխանիզմների ու ընթացակարգերի կատարելագործման, նոր մեխանիզմների մշակման և գործողության մեջ դնելու ուղղությամբ:

Բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու պետական աջակցության ապահովման կարգով ԼՂՀ քաղաքացիների համար սահմանված ընդհանուր և վարկավորման պայմաններն ընդլայնելու նպատակով՝ 2009 թվականին մշակվել և ԼՂՀ կառավարության հաստատման է ներկայացվել ԼՂՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 101 որոշմամբ հաստատված բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու պետական աջակցության ապահովման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծը, որը հաստատվել է ԼՂՀ կառավարության 2009 թվականի հունվարի 20-ի թիվ 16-Ն որոշմամբ:

Հաշվի առնելով գյուղաբնակ քաղաքացիների համար վերոհիշյալ ծրագրից օգտվելու դժվարությունները՝ կապված բանկերի կողմից նրանց վարկավորման գործընթացի հետ՝ հաշվետու ժամանակաշրջանում հիմնադրամում մշակվել է ԼՂՀ գյուղաբնակ քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման պետական ֆինանսական աջակցության ծրագրի իրականացման կարգը, որը հաստատվել է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2009 թվականի հունվարի 14-ի թիվ 04 որոշմամբ: Մշակվել է նաև «ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցություն» ծրագրի իրականացման կարգը, որը Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատվել է 11.03.09-ին: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատվել են նաև ՓՄՁ սուբյեկտների պետական աջակցության ծրագրերի իրականացման գործող կարգերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին մի շարք որոշումներ: Ընդհանուր առմամբ 2009 թվականին Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդը ընդունել է թվով 25 որոշում, իսկ Հիմնադրամի ֆինանսական կոմիտեն՝ 849: Հիմնադրամի գործադիր մարմնի կողմից 2009 թվականին ընդունվել են ընթացիկ գործունեությունը կանոնակարգող թվով 23 իրավական ակտեր:

ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման աջակցության, հիփոթեքային վարկավորմամբ բնակարան /առանձնատուն/ ձեռք բերելու կամ վերանորոգելու ֆինանսական աջակցության ծրագրերի շրջանակներում գործնական քայլեր են կատարվել գործակալ բանկերի թվի ավելացման ուղղությամբ: 2009 թվականի փետրվարի 4-ին համագործակցության պայմանագիր է կնքվել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի հետ:

Հիմնադրամում պարբերաբար իրականացվում են ԼՂՀ ներդրումային հայեցակարգով սահմանված ուղղություններին համապատասխան հիմնադրամի ծրագրերի պատասխանատուների և փորձագետների կողմից մշակվող գործարար ծրագրերի քննարկումներ:

Սույն թվականի հոկտեմբերին ԼՂՀ արտաքին գործերի նախարարության միջնորդությամբ Հիմնադրամում կազմակերպվել է Իրանի Հանրապետությունից ժամանած մի շարք գործարարների ընդունելություն, որի ժամանակ քննարկվել են ԼՂՀ ներդրումային դաշտին առնչվող հարցեր:

Հաշվետու ժամանակաշրջանում հիմնադրամի գլխավոր տնօրենի հրամանի համաձայն ձևավորվել է հիմնադրամի ռիսկերի գնահատման հանձնաժողով, որն իրականացրել է «Չարգացման արցախյան գործակալություն» ՊՈԱԿ-ի գործունեության ընթացքում և Արցախի ներդրումային հիմնադրամի ռիսկայնությամբ շահառուներին տրամադրված ֆինանսական միջոցների ապահովվածության աստիճանի ուսումնասիրության և գնահատման աշխատանքներ:

2009 թվականին հիմնադրամը համապատասխան աշխատանքներ և միջոցառումներ է իրականացրել ծրագրերի, մասնավորապես՝ հիփոթեքային վարկավորմամբ բնակարան /առանձնատուն/ ձեռք բերելու կամ վերանորոգելու ֆինանսական աջակցության, ՓՄՉ սուբյեկտներին ֆինանսական աջակցության, ԼՂՀ գյուղաբնակ քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման պետական ֆինանսական աջակցության ծրագրերի իրականացման ընթացքի մասին զանգվածային լրատվության միջոցներով պարբերաբար տեղեկատվության տարածման ուղղությամբ:

Արցախի հանրային հեռուստատեսությամբ մեկնարկվել է «Արցախի ներդրումային հիմնադրամ» հաղորդաշարը, որի միջոցով հանրությանը իրազեկվում է հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի արդյունքների, ինչպես նաև հետագա անելիքների մասին:

Հաշվետու ժամանակաշրջանում հիմնադրամ են դիմել թվով 896 քաղաքացիներ և ՓՄՉ սուբյեկտներ, մուտքագրվել են 849 դիմումներ, այդ թվում՝ 544-ը՝ ԼՂՀ քաղաքացիներից, 305-ը՝ պետական կառավարման մարմիններից՝ ուսումնասիրման նպատակով քաղաքացիների դիմումներ: Քննարկման արդյունքներով ձևակերպվել են 596 պատասխան գրություններ և 253 քաղաքացիների տրվել են բանավոր պարզաբանումներ:

## 2. ՓՄՉ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն



«Տեխնոշին» ՍՊԸ

նպատակների իրականացման աջակցությանն ուղղված ֆինանսական միջոցների ընդհանուր գումարը կազմում է մոտ 10019 մլն դրամ, այդ թվում՝ 2009 թվականին՝ 4286.7 մլն դրամ, որից 42.7 մլն դրամը տրամադրված է «ՓՄՉ սուբյեկտներին ֆինանսական աջակցություն»

ՓՄՉ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցության ծրագիրը նպատակ ունի նպաստել ԼՂՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը խոչնդոտող ֆինանսական բնույթի հիմնախնդիրների հաղթահարմանը և ֆինանսական ռեսուրսների մատչելիության ապահովմանը: 2003 թվականից ծրագրի շրջանակում թվով 596 ՓՄՉ սուբյեկտներ հնարավորություն են ստացել սկսելու կամ ընդլայնելու իրենց սեփական գործը: Այդ



ԱՉ Ֆելիքս Հախումյան, Ասկերանի շրջան

ենթաձրագրի շրջանակում, իսկ 4244.0 մլն




«Միլենիում» ՍՊԸ, ք.Ստեփանակերտ

դրամը՝ հիմնադրամի հետ համագործակցող առևտրային բանկերի միջոցներով, որը հնարավոր էր հիմնադրամի կողմից ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ենթաձրագրի իրականացման շնորհիվ: 2009 թվականին ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկային միջոցների ընդհանուր գումարը մոտ 1.4 անգամ գերազանցել է 2008 թվականին /3080.9 մլն դրամ/ և 4.9 անգամ 2007 թվականին /871.72 մլն դրամ/ տրամադրված վարկերի ընդհանուր գումարներին:

Արտոնյալ պայմաններով ԼՂՀ ՓՄՁ սուբյեկտներին վարկային միջոցների տրամադրման դինամիկան 2003-2009 թթ. ներկայացվում է ստորև.

### Վարկային միջոցների տրամադրման դինամիկան 2003-2009 թթ.

Գծապատկեր 1  
/մլն դրամ/



### 2.1 ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցություն



ԱՉ Մամվե Ավագյան, Մարտունու շրջ., գ.Ջիվանի

Սույն ծրագիրը նպատակ ունի ԼՂՀ շրջաններում, հատկապես գյուղական բնակավայրերում ընդլայնել ՓՄՁ սուբյեկտների վարկավորման հնարավորությունները: Այդ նպատակով Հիմնադրամը համագործակցում է «Արցախբանկ» և «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ների հետ որոնց միջոցով ցածր տոկոսադրույքով

երկարաժամկետ վարկեր են տրամադրվում ՓՄՁ սուբյեկտներին:

2009 թվականին Հիմնադրամում աշխատանքներ են կատարվել սույն ծրագրի իրականացման մեխանիզմի կատարելագործման ուղղությամբ. մշակվել և հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացվել ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցության ծրագրի իրականացման կարգը՝ նոր խմբագրությամբ, որը հաստատվել է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2009 թվականի մարտի 11-ի թիվ 08 որոշմամբ:

Սույն ծրագրի շրջանակում 2003-2009 թվականներին ԼՂՀ փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին տրամադրվել է 2862,1 մլն դրամ վարկ, այդ թվում՝ 2009թ. 42,7 մլն դրամ, որը մոտ 4 անգամ փոքր է նախորդ տարվա ֆինանսավորման գումարից: Այն տրամադրվել է 14 շահառուի, որից 11-ին՝ 3-րդ փուլով խաղողագործության և պտղաբուծության զարգացման ծրագրերի իրականացման համար, մեկին՝ ոչ պարենային արտադրության կազմակերպման, 2-ին՝ առևտրի զարգացման համար:

Աջակցություն ստացած սուբյեկտների թվաքանակի և աջակցության գումարների կրճատումը պայմանավորված է ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից գյուղատնտեսության ոլորտում գործող սուբյեկտների վարկավորման ծավալների ընդլայնմամբ:


Վարկի տեսքով պետական ֆինանսական աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտները գործարար ծրագրին համապատասխան ծավալած գործունեության վերջնական ֆինանսական արդյունքների շնորհիվ իրականացնում են վարկի մասնակի և վերջնական մարումներ: 2009 թվականին սույն ծրագրի շրջանակում ՓՄՁ սուբյեկտների պարտավորությունների վերջնական մարումները կազմել են 111,9 մլն դրամ, մասնակի մարումները՝ 283,7 մլն դրամ:

Սույն ծրագրի շրջանակում 2003-2009 թվականներին ԼՂՀ փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին տրամադրված վարկային միջոցների բաշխվածքն ըստ գործունեության ոլորտների ներկայացված է ստորև.

### Ֆինանսական աջակցության բաշխվածքն ըստ ոլորտների 2003-2009թթ.

Գծապատկեր 2


/մլն դրամ/



ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված ֆինանսական աջակցության դինամիկան 2003-2009 թթ.՝ գործունեության ոլորտների բաշխվածությամբ, ունի հետևյալ տեսքը.

**Ֆինանսական աջակցության դինամիկան 2003-2009 թթ.**


Գծապատկեր 3  
/մլն դրամ/



ԼՂՀ փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին 2003-2009 թվականներին՝ ըստ շրջանների տրամադրված ֆինանսական աջակցության բաշխվածքի մասին, պատկերացում է տալիս ստորև ներկայացված գծապատկերը.

**Ֆինանսական աջակցության բաշխվածությունն ըստ ԼՂՀ շրջանների 2003-2009թթ.**

Գծապատկեր 4  
/մլն դրամ/



**2.2 ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման աջակցություն**

2009 թվականին շարունակվել է ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ծրագիրը, որի էությունը

կայանում է նրանում, որ Հիմնադրամի հետ համագործակցության պայմանագիր կնքած առևտրային բանկերը իրենց միջոցներով և ռիսկով տնտեսավարող սուբյեկտներին տրամադրում են վարկեր, իսկ Հիմնադրամը սուբսիդավորում է (անհատույց վճարում է) այդ




ԱՉ Գեներալի Մուսայելյան, ք.Մարտունի

վարկերի տարեկան տոկոսադրույքների մինչև 10 տոկոսային կետը՝ բարձրացնելով վարկերի մատչելիությունը:

Ծրագրի գործարկման 2 տարվա ընթացքում Հիմնադրամի գործընկեր բանկերի կողմից 178 ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել է 7156,88 մլն դրամ վարկ: 2008-2009թթ. ըստ եռամսյակների տրամադրված երաշխավորագրերի և վարկերի մասին պատկերացում է տալիս ստորև ներկայացված գծապատկերը:

Երաշխավորագրերի տրամադրումը և հայտերի ֆինանսավորումը 2008-2009թթ

Գծապատկեր 5



Հաշվետու ժամանակաշրջանում առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման աջակցություն ստանալու հայտ են ներկայացրել 103 սուբյեկտներ՝ 4904,0 մլն դրամ վարկային միջոցների պահանջով: Հիմնադրամի ֆինանսական կոմիտեի կողմից հաստատվել են 101 հայտ՝ 4777,0 մլն դրամ ընդհանուր գումարով, որոնց բաշխվածությունն ըստ տնտեսության ճյուղերի բերված է ստորև դիտարկված աղյուսակում.



**2009 թվականին ծրագրի շրջանակում հաստատված հայտերի բաշխվածությունն ըստ տնտեսության ճյուղերի**

Աղյուսակ 1

Հ/Հ	Տնտեսության ճյուղը	Քանակը /հատ/	Գումարը /մլն դրամ/	Աշխատատեղերի քանակը /հատ/
1	Արդյունաբերություն	34	1889.1	229
2	Գյուղատնտեսություն	26	415.7	104
3	Շինարարություն	8	1050.5	132
4	Առևտուր	6	95.0	13
5	Ծառայություններ	27	1326.75	149
	<b>Ընդամենը</b>	<b>101</b>	<b>4777.00</b>	<b>627</b>

Հաստատված ծրագրերի հայտատուներին տրվել են առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման երաշխավորագրեր:

2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ համագործակցող բանկերում ընթացքավորման մեջ էին գտնվում թվով 26 երաշխավորագրեր, ընդ որում՝ 23-ը՝ «Արցախբանկ», 3-ը՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ներում: 2009 թվականի ընթացքում հիմնադրամը տրամադրել է 101 երաշխավորագիր, ընդհանուրը 4777,0 մլն դրամ գումարով: Տրամադրված երաշխավորագրերից հրաժարվել են 4 սուբյեկտներ՝ 246,5 մլն դրամ ընդհանուր գումարի չափով: Երաշխավորագրեր ստացած 3 սուբյեկտների հայտեր՝ 51,5 մլն դրամ ընդհանուր գումարով, մերժվել են գործակալ բանկերի կողմից: Հիմնադրամի գործակալ բանկերի հետ 95 տնտեսավարող սուբյեկտներ ստորագրել են 95 վարկային պայմանագրեր՝ 2682,6 մլն դրամ և 4119,8 հազ. դոլար, ընդամենը՝ 4244,0 մլն դրամ գումարներով:

**Վարկերի տրամադրումն ըստ հիմնադրամի հետ համագործակցող առևտրային բանկերի**

Աղյուսակ 2

Հ/Հ	Գործակալ բանկերը	Ֆինանսավորված հայտերի				
		քանակը	գումարը			
			մլն դրամ	հազար ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլարին համարժեք մլն դրամ*	Ընդամենը
1	«Արցախբանկ» ՓԲԸ	85	1692.3	4119.8	1561.4	3253.7
2	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	8	925.3	0	0	925.3
3	«Ամերիաբանկ» ՓԲԸ	2	65.0	0	0	65.0

	Ընդամենը	95	2682.6	4119.8	1561.4	4244.0
--	----------	----	--------	--------	--------	--------

\* 1 ԱՄՆ դոլարը = 379,0 ՀՀ դրամ՝ առ 01,01,10



«Լուս Անուշ» ՍՊԸ, Մարտակերտի շրջան

Ֆինանսավորված գործարար ծրագրերի իրականացման արդյունքում նախատեսվում է պահպանել և ստեղծել մոտ 650 աշխատատեղ:

Հաշվետու ժամանակաշրջանում ծրագրի շրջանակում առևտրային բանկերի կողմից ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի բաշխվածքն՝ ըստ սուբյեկտների գործունեության ոլորտների, հետևյալն է. արդյունաբերություն՝ 41,7%, գյուղատնտեսություն՝ 7,6%, շինարարություն՝ 16%, առևտուր՝ 2,3%, ծառայությունների մատուցում՝ 32,5%:

Թիվ 3 աղյուսակում դիտարկված է վարկերի տրամադրման դինամիկան 2008-2009թթ.՝ ըստ տնտեսության ճյուղերի:


**Վարկերի տրամադրման դինամիկան ըստ տնտեսության ճյուղերի 2008-2009թթ.**

Աղյուսակ

3


Հ/Հ	Տնտեսության ճյուղը	Ֆինանսավորված հայտերի					
		քանակը			գումարը /մլն դրամ/		
		2008թ.	2009թ.	Աճը (-) 2009թ.-ը 2008թ.-ի նկատմամբ %-ով	2008թ.	2009թ.	Աճը (-) 2009թ.-ը 2008թ.-ի նկատմամբ %-ով
1	Արդյունաբերություն	22	29	31.8	1538.7	1770.7	15.1
2	Գյուղատնտեսություն	30	28	-6.7	442.6	321.3	-27.4
3	Շինարարություն	3	4	33.3	368.5	677.4	83.8
4	Առևտուր	8	8	0.0	233.0	97.4	-58.2
5	Ծառայություններ	20	26	30.0	330.1	1377.3	317.2
	<b>Ընդամենը</b>	<b>83</b>	<b>95</b>	<b>14.5</b>	<b>2912.9</b>	<b>4244.0</b>	<b>45.7</b>

2009 թվականին տրամադրված վարկերի բաշխվածքն ըստ ԼՂՀ շրջանների, հաշվի առնելով նաև շրջանի կարգավիճակ ունեցող Ստեփանակերտ քաղաքը, ներկայացված է ստորև դիտարկված գծապատկերում:



2009 թվականին Հիմնադրամը ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տարեկան տոկոսադրույքների սուբսիդավորման համար ծախսել է 350933.08 հազ. դրամ, որի բաշխվածքն ըստ ՓՄՁ սուբյեկտների գործունեության ոլորտների ունի հետևյալ տեղը.


Գծապատկեր 7






**2009 թվականին ծրագրի շրջանակում աջակցություն ստացած շահառուների բաշխվածությունն ԼՂՀ շրջաններում՝ ըստ գործունեության ոլորտների**  
/տոկոսներով՝ ընդամենը շրջանի նկատմամբ/

Գծապատկեր 8



**Թվականին ծրագրի շրջանակում տրամադրված ֆինանսական աջակցության բաշխվածությունն ԼՂՀ շրջաններում՝ ըստ գործունեության ոլորտների**  
/տոկոսներով՝ ընդամենը շրջանի նկատմամբ/

Գծապատկեր 9



### 3. ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն

Ծրագիրը նպատակ ունի նպաստել ՓՄՁ սուբյեկտների գործունեությանը և զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրների հաղթահարմանը՝ կապված գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարությունների հետ, ինչպես նաև ապահովել ՓՄՁ սուբյեկտների համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման մատչելիությունը, ընդլայնել խորհրդատվական ծառայություններից օգտվելու հնարավորությունները:

2009 թվականին սույն ծրագրի շրջանակում Հիմնադրամը իրականացրել է հետևյալ աշխատանքները.

- Հրատարակել է՝
  1. «Արցախի շինարար» անդրանիկ տեղեկատվական պարբերականը,
  2. «ՓՄՁ պետական աջակցության ծրագրերի իրականացման կարգերը և ընթացակարգերը» իրավական ակտերի տեղեկագիրը,
  3. «Բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարանների ձեռքբերման և վերանորոգման պետական ֆինանսական աջակցության ապահովման կարգը և ընթացակարգերը» իրավական ակտերի տեղեկագիրը,
  4. «ԼՂՀ գյուղաբնակ քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման պետական ֆինանսական աջակցության կարգը և ընթացակարգերը» իրավական ակտերի տեղեկագիրը:
- Հրատարակման ընթացքում են՝
  1. «Գյուղատնտեսությունն Արցախում» տեղեկատվական պարբերականը,
  2. «Ներդրողի ուղեցույց» տեղեկատու՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով:
- Ստեղծվել է հիմնադրամի ինտերնետային կայքը, որի միջոցով տեղեկություններ են տարածվում հիմնադրամի գործունեության վերաբերյալ:



- Ընթացքում են ԼՂՀ կազմակերպությունների մասին տեղեկատվական շտեմարանի ստեղծման աշխատանքները:

#### 4. ՓՄՉ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի / մատուցվող ծառայությունների/ շուկաներում առաջնդնանն աջակցություն

Արտահանման ծավալների ավելացմանը, ՓՄՉ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի /մատուցվող ծառայությունների/ մրցունակությանը և ՓՄՉ սուբյեկտների հեղինակության բարձրացմանը նպաստելու նպատակով սույն ծրագրի շրջանակում Հիմնադրամը իրականացնում է մի շարք միջոցառումներ՝ ուղղված ՓՄՉ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի /մատուցվող ծառայությունների/ շուկաներում առաջնդնանն:

2009թ. փետրվարի 9-13-ը ՌԳ Մոսկվա քաղաքում կայացած «PRODEXPO 2009» միջազգային սննդամթերքի ցուցահանդեսին հիմնադրամի աջակցությամբ մասնակցեցին «Արցախ Ֆրուր» ՓԲԸ-ն, «Ադանա» ՓԲԸ-ն և «Ստեփանակերտի կոնյակի գործարան» ՓԲԸ-ն, ինչպես նաև ԼՂՀ տնտեսական զարգացման նախարար Բենիկ Բաբայանը և հիմնադրամի գլխավոր տնօրեն Կարեն Եսայանը:

ՓՄՉ սուբյեկտների ներկայացուցիչների ցուցահանդեսին մասնակցության ծախսերը հատուցվել են մասնակի՝ գրանցման, տարածքի վարձակալության և սպահովագրական վճարների, ինչպես նաև ցուցահանդեսի պաշտոնական կատալոգում գովազդային նյութերի տպագրման ծախսերի մասով:



BRIDGE 2009, Ծաղկաձոր

2009թ. փետրվարի 20-23-ը ՀՀ Ծաղկաձոր հանգստավայրում կայացած «BRIDGE 2009» միջազգային տնտեսական համաժողովի աշխատանքներին ԼՂՀ-ից մասնակցեցին 5 ՓՄՉ սուբյեկտներ՝ «ՌԷԳԷՆ» ՍՊԸ-ն, «Շին-Վեր Պլյուս» ՍՊԸ-ն, «Խաչեն» ՓԲԸ-ն, «Ոսկե հասկ» ՍՊԸ-ն և ԱԶ Նարինե Լալայանը, որոնք Հիմնադրամի կողմից ստացան համապատասխան ֆինանսական աջակցություն՝ գրանցման վճարի մասով:

2009թ. ապրիլի 14-19-ը Չինաստանի Գուանչժոու քաղաքում տեղի ունեցած 105-րդ չինական ներմուծում-արտահանում տոնավաճառին հիմնադրամի աջակցությամբ իրենց մասնակցությունը ցուցաբերեցին «Շին-Վեր Պլյուս», «Հրատ» ՍՊԸ-ների ներկայացուցիչները և ԼՂՀ ԿԱ կապիտալ շինարարության վարչության պետ Կարեն Շահրամանյանը, որի գործուղման ծախսերը սույն ծրագրի միջոցների հաշվին հատուցվել են լրիվությամբ, իսկ «Շին-Վեր Պլյուս» և «Հրատ» ՍՊԸ-ների ծախսերը հատուցվել են մասնակի՝ հյուպարթոսական վճարի և ճանապարհաձախսի մասով:

2009թ. Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում կազմակերպված «INTERMAT 2009» շինարարական սարքավորումների և տեխնոլոգիաների միջազգային ցուցահանդեսին հիմնադրամի աջակցությամբ մասնակցել է ԼՂՀ քաղաքաշինության նախարար Անահիտ Վարդանյանը:

2009թ. հունիսի 4-5-ը Մերձդնեստրյան Հանրապետության ք. Տիրասպոլում կայացած Առաջին Մերձդնեստրյան ներդրումային համաժողովին մասնակցեցին հիմնադրամի աշխատակազմի ղեկավար Վարդան Ավետիսյանը և «Արցախ Ֆրուր» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գագիկ Ներսեսյանը:

2009թ. հունիսի 19-21-ը «ՄԱՍՏԵՐ» ՄԻԱԿ-ի և Արցախի ներդրումային հիմնադրամի



BRIDGE ARTSAKH, ք.Ստեփանակերտ

համատեղ նախաձեռնությամբ ք.Ստեփանա-կերտում ԼՂՀ Նախագահի բարձր հովանու ներքո, ԼՂՀ կառավարության աջակցությամբ կազմակերպվեց BRIDGE ARTSAKH տնտեսական համաժողովը, որն ընդգրկեց ավել քան 260 մասնակիցներ, այդ թվում՝ ՀՀ և ԼՂՀ պետական պաշտոնատար անձինք, արտերկրյա, ՀՀ և ԼՂՀ գործարարներ:

Համաժողովի կազմակերպման աշխատանքների շրջանակներում Արցախի ներդրումային հիմնադրամը իրականացրեց հետևյալ միջոցառումները.

- ԼՂՀ-ից մասնակիցների մասնակցության ապահովում և աջակցություն,
- «Պետական աջակցության ծրագրեր», «ԼՂՀ ընդհանուր բնութագիրը և մակրոտնտեսական ցուցանիշները» բուկլետների հրատարակում,
- «ԼՂՀ ընդհանուր բնութագիրը և մակրոտնտեսական ցուցանիշները DVD շնորհանդեսը» էլեկտրոնային սկավառակի պատրաստում,
- ԼՂՀ տնտեսության արտադրության ոլորտում գործող թվով 10 սուբյեկտների համար գովազդային պաստառների պատրաստում,
- այլ անհրաժեշտ կազմակերպչական աշխատանքների կատարում:



2009թ. ՀՀ ք. Երևանում սեպտեմբերի 4-6-ը կայացավ ARMENIA EXPO 2009 9-րդ տարածաշրջանային ունիվերսալ առևտրա-արդյունաբերական



ARMENIA EXPO 2009, ք. Երևան

ցուցահանդեսային ֆորումը, որին ԼՂՀ-ից մասնակցեցին 5 ՓՄՁ սուբյեկտներ՝ «Մասուն» ՓԲԸ-ն, «Կարին» ՓԲԸ-ն, ԱՁ Սելսոն Սարգսյանը, «Ադանա» ՓԲԸ-ն և «Արցախ Ֆրոյթ» ՓԲԸ-ն: Վերոհիշյալ ՓՄՁ սուբյեկտներին հիմնադրամի կողմից ցուցաբերվել է աջակցություն՝ ցուցադրական տարածքի վարձակալության, միասնական գրանցման վճարի, գովազդային ինֆորմացիայի պատրաստման, պաստառների ձևավորման, տպագրման ու տեղադրման, ցուցահանդեսային ստենդի ձևավորման ու ցուցադրվող նմուշների

տեղափոխման ծախսերի լրիվ հատուցման ձևով:

Հիմնադրամը աջակցություն է ցուցաբերել ԼՂՀ գյուղատնտեսության զարգացման անհրաժեշտ Ռ-ապս տեսակի աշնանացան ցորենի կուլտուրայի աճեցման համար նախատեսվող տեխնիկայի և համապատասխան ունակությունների ձեռքբերման նպատակով 2009թ. սեպտեմբերի 28-30-ը Բելոռուսի Հանրապետության մայրաքաղաք Մինսկ գործուղված ներքոնշյալ կազմով պատվիրակությանը՝ գործուղման ծախսերի լրիվ հատուցման ձևով.

- Հրայր Սարգսյան՝ «Պրոմագրոսերվիս» ՓԲԸ տնօրեն,
- Նորայր Ստեփանյան՝ «Ստարտ Պլյուս» ՍՊԸ տնօրեն,
- Արամ Մխոյան՝ «Ստարտ Պլյուս» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվետու տարում սույն ծրագրի միջոցառումների իրականացման համար ծախսվել է 15 089,47 հազ. դրամ:

## 5. ՓՄՁ սուբյեկտների մոտ նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն

Սույն ծրագրի նպատակն է ՓՄՁ սուբյեկտների մոտ նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն ցուցաբերելով՝ նպաստել

գիտատեխնիկական արդյունքների արդյունավետ օգտագործմանը, տեղական արտադրանքի մրցունակության բարձրացմանը և ՓՄՁ սուբյեկտների արտահանման ներուժի ընդլայնմանը:

2009թ. սույն ծրագրի շրջանակում ԼՂՀ շրջաններում գործող թվով 2 ՓՄՁ սուբյեկտների ցուցաբերվել է աջակցություն. անհատույց տրամադրվել է համակարգչային տեխնիկա և հաշվապահական ծրագիր, ապահովվել է ընկերությունների հաշվապահների «ՀԾ-1» ծրագրի ուսուցումը:


Ծրագրի շրջանակում նման աջակցություն ստացած թվով 15 ՓՄՁ սուբյեկտների հետ հիմնադրամը համացանցի միջոցով շարունակում է պահպանել փոխադարձ կապ՝ նրանց տեղեկատվության տրամադրման և հետաքրքրող հարցերի պարզաբանման նպատակով:

Աջակցություն ստացած սուբյեկտների բաշխվածությունն ըստ ոլորտների՝

- շինարարություն՝ 48%,
- սննդի արտադրություն՝ 40%,
- ծառայություններ՝ 12%:

**Նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցություն ստացած սուբյեկտների բաշխվածքն ըստ ԼՂՀ շրջանների**

Գծապատկեր 10



**6. Հիփոթեքային վարկավորմամբ բնակարան /առանձնատուն/ ձեռք բերելու կամ վերանորոգելու ֆինանսական աջակցություն**

ԼՂՀ քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման և ԼՂՀ-ում բնակարանաշինարարության զարգացման նպատակով Հիմնադրամը 2008 թվականից իրականացնում է բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարան ձեռք բերելու պետական ֆինանսական աջակցության ապահովման ծրագիրը, որի էությունը կայանում է նրանում, որ Հիմնադրամի հետ համագործակցող բանկերը սույն ծրագրի ընդհանուր պայմաններին բավարարող քաղաքացիներին տրամադրում են հիփոթեքային վարկեր բնակարան գնելու, վերանորոգելու կամ կառուցելու համար, իսկ Հիմնադրամը ցուցաբերում է աջակցություն հետևյալ ձևերով.

- ա. հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում,
- բ. նպատակային փոխառությամբ կանխավճարների տրամադրում,
- գ. հիփոթեքային վարկավորմամբ իրացման նպատակով բնակարանների /առանձնատների/ կառուցում:

**6.1 Հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում**

2009 թվականին Հիմնադրամը շարունակել է բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարան ձեռք բերելու պետական ֆինանսական աջակցության ծրագրի

իրականացումը, մասնավորապես հիփոթեքային վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ուղղությամբ, որի դեպքում Հիմնադրամի կողմից սուբսիդավորվել է (անհատույց վճարվել է) հիփոթեքային վարկերի տարեկան տոկոսադրույքների մինչև 6 տոկոսային կետը, ինչի շնորհիվ ապահովվել է առևտրային բանկերի կողմից տրամադրվող հիփոթեքային վարկերի մատչելիությունը ԼՂՀ քաղաքացիների համար:

Կատարվել են ծրագրի իրականացման մեխանիզմների կատարելագործմանն ուղղված աշխատանքներ: Արդյունքում մշակվել և ԼՂՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել գործող կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծ, որը հաստատվել է ԼՂՀ Կառավարության 2009 թվականի հունվարի 20-ի թիվ 16-Ն որոշմամբ: ԼՂՀ քաղաքացիների համար ընդլայնվել են ծրագրից օգտվելու հնարավորությունները:

Հիմնադրամը 2009 թվականի ապրիլի 2-ին համագործակցության պայմանագիր է ստորագրել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի հետ:

2009 թվականի ընթացքում հիմնադրամ է դիմել ընդամենը 331 քաղաքացի, որոնցից 59-ը՝ բնակարանի գնման, 37-ը՝ բնակելի տան կառուցման, 235-ը՝ բնակարանի վերանորոգման համար: Ընդ որում՝ բնակարանի գնման համար դիմած քաղաքացիներից 46-ը ցանկացել են բնակարան ձեռք բերել առաջին գոտում (ք. Ստեփանակերտում), 13-ը՝ երկրորդ գոտում (ԼՂՀ շրջաններում): Բնակելի տան կառուցման համար դիմած քաղաքացիներից 35-ը՝ առաջին գոտում, 2-ը՝ երկրորդ: Բնակարանի վերանորոգման համար դիմած քաղաքացիներից 168-ը՝ առաջին գոտում, 67-ը՝ երկրորդ գոտում:



մինչև վերանորոգումը



վերանորոգումից հետո

Հաշվետու ժամանակաշրջանում հիփոթեքային վարկավորման աջակցության ծրագրից օգտվելու նպատակով դիմած քաղաքացիների՝ ըստ շրջանների բաշխվածությունը ներկայացված է ստորև:

**Ծրագրից օգտվելու նպատակով հիմնադրամ դիմած քաղաքացիների բաշխվածությունն՝ ըստ շրջանների**

Աղյուսակ 4

Շրջանը	Քաղաքացիների թիվը	Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ	այդ թվում		
			բնակարանի գնում	բնակելի տան կառուցում	բնակարանի վերանորոգում
ք.Ստեփանակերտ	252	76.133	19.84	13.89	66.27
Ասկերանի շրջան	21	6.34	9.5	4.8	85.7
Մարտունու շրջան	21	6.34	14.3	4.8	81.0
Մարտակերտի շրջան	11	3.32	18.2	0.0	81.8

Շուշիի շրջան	23	6.95	8.7	0.0	91.3
Հաղրուփի շրջան	3	0.91	0.0	0.0	100.0
<b>Ընդամենը</b>	<b>331</b>	<b>100</b>			

Ընդհանուր 331 տեղեկանքներից 314-ը՝ ծրագրի փորձագետների կողմից նախնական դրական եզրակացության են արժանացել, 17-ը՝ բացասական: Այսինքն, Հիմնադրամ դիմած քաղաքացիների 94.8%-ի պայմանները համապատասխանում են պետական աջակցության տրամադրման կարգով սահմանված ընդհանուր պայմաններին:


2009 թվականի ընթացքում հիմնադրամի ֆինանսական կոմիտեի կողմից բավարարվել է հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման աջակցություն ստանալու համար ներկայացված 304 հայտ, այդ թվում՝ 47 բնակարանի գնման, 215-ը՝ վերանորոգման, 42-ը՝ կառուցման նպատակներով:

Ֆինանսական կոմիտեի համապատասխան որոշումների հիման վրա դրական եզրակացություն ստացած քաղաքացիներին տրամադրվել են պետության ֆինանսական աջակցությունը հավաստող երաշխավորագրեր: Ընդհանուր առմամբ 2009 թվականին հիմնադրամի կողմից տրվել է ընդհանուրը 1829.2 մլն դրամ գումարի թվով 304 երաշխավորագրեր, որը 21.6%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

Քաղաքացիներին՝ ըստ աջակցության ուղղությունների, տրամադրված երաշխավորագրերի բաշխվածության մասին պատկերացում է տալիս թիվ 11 գծապատկերը:

**2009 թվականին տրամադրված երաշխավորագրերի բաշխվածքը ըստ ԼՂՀ շրջանների**

Գծապատկեր 11



2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ գործակալ բանկերում ընթացքավորման փուլում էին գտնվում 32 հայտեր, որոնցից 23-ը՝ Արցախբանկում, 9-ը՝ Հայքիզնեսբանկում:

2009թ. գործակալ բանկերի հետ վարկային պայմանագրեր են կնքել 229 քաղաքացիներ, որոնցից 28-ը բնակարանի գնման, 171-ը վերանորոգման, 30-ը բնակելի տան կառուցման նպատակով՝ 1120.8 մլն դրամ ընդհանուր գումարով:

2009թ. գործակալ բանկերի կողմից մերժվել է 14 հայտ: Բանկերում ընթացքավորման փուլում տարբեր պատճառներով հայտից հրաժարվել են 15 քաղաքացիներ:


Բանկերի կողմից հայտերի մերժման հիմնական պատճառներն են.

- քաղաքացիների եկամուտների ցածր մակարդակը,
- որոշ քաղաքացիների վարկային բացասական պատմությունը:

2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ 78 հայտ գտնվում են գործակալ բանկերում՝ ընթացքավորման փուլում:

### Ծրագրի շրջանակում երաշխավորագրերի և վարկերի տրամադրման դինամիկան 2008-2009թթ

Գծապատկեր 12



### 2009թ. վարկերի տրամադրումն ըստ հիմնադրամի հետ համագործակցող առևտրային բանկերի

Աղյուսակ 5


Հ/հ	Գործակալ բանկերը	Ֆինանսավորված հայտերի				
		քանակը	գումարը			
			մլն դրամ	հազար ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլարին համարժեք մլն դրամ*	Ընդամենը
1	«Արցախբանկ» ՓԲԸ	162	495.2	818.3	310.1	805.3
2	«Հայքիզնեսբանկ» ՓԲԸ	64	286.2	0	0	286.2

3	«Ամերիաբանկ» ՓԲԸ	3	29.3	0	0	29.3
	Ընդամենը	229	810.7	818.3	310.1	1120.8

\* 1 ԱՄՆ դոլարը = 379,0 ՀՀ դրամ՝ առ 01,01,10

### 2009թ. վարկերի տրամադրումն ըստ ուղղությունների

Գծապատկեր 13



### 2009թ. վարկերի տրամադրումն ըստ ԼՂՀ շրջանների

Աղյուսակ 6  
/%-ով/

Ընդամենը	229 /վարկ/	100	այդ թվում		
			բնակարանի գնում	բնակելի տան կառուցում	բնակարանի վերանորոգում
ք.Ստեփանակերտ	177	77.29	13.56	14.69	71.75
Ասկերանի շրջան	16	6.99	0.00	6.25	93.75
Մարտունու շրջան	13	5.68	15.38	7.69	76.92
Մարտակերտի շրջան	6	2.62	16.67	16.67	66.67
Շուշիի շրջան	15	6.55	6.67	0.00	93.33
Հաղրուբի շրջան	2	0.87	0.00	50.00	50.00



2008-2009 թվականներին ծրագրի իրականացման համեմատական ցուցանիշները ներկայացված են թիվ 1 հավելվածում:

Ընդհանուր առմամբ 2008-2009 թվականներին սույն ենթածրագրի շրջանակում ըստ ուղղությունների աջակցություն ստացած քաղաքացիների թվաքանակի մասին պատկերացում է տալիս ստորև դիտարկված աղյուսակը.

**Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր**

**Ֆինանսական աջակցությունից օգտված շահառուների մասին առ 01.01.10**

Աղյուսակ 7

Վարկի նպատակը	Ֆինանսավորված վարկերի քանակը	Ֆինանսական աջակցությունից օգտված շահառուների քանակը
Բնակարանի գնում	83	333
Բնակարանի վերանորոգում	295	1169
Բնակարանի կառուցում	41	163
Ընդամենը	419	1665

Հաշվետու ժամանակաշրջանում ծրագրի շրջանակում ԼՂՀ քաղաքացիներին տրամադրված հիփոթեքային վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորմանն ուղղված գումարները կազմել են 82070.53 հազ. դրամ: Բաշխվածքն ըստ աջակցության ուղղությունների և բնակության վայրերի դիտարկված է ստորև ներկայացված աղյուսակում:

**2009 թվականին ԼՂՀ քաղաքացիներին տրամադրված ֆինանսական աջակցությունն (սուբսիդավորման գումարները)՝ ըստ շրջանների և ուղղությունների**

Աղյուսակ 8

ՀՀ	Շրջանը	Աջակցության ուղղությունը	Աջակցության /սուբսիդիայի/ գումարը /մլն դրամ/
1	ք. Ստեփանակերտ	բնակարանի գնում	44.58
		բնակելի տան կառուցում	8.80
		բնակարանի վերանորոգում	21.02
2	Ասկերանի շրջան	բնակարանի գնում	0.88
		բնակելի տան կառուցում	0.30
		բնակարանի վերանորոգում	0.91
3	Մարտունու շրջան	բնակարանի գնում	0.56
		բնակելի տան կառուցում	0.03
		բնակարանի վերանորոգում	2.31
4	Մարտակերտի շրջան	բնակարանի գնում	0.41
		բնակելի տան կառուցում	0.16
		բնակարանի վերանորոգում	0.22

5	Շուշիի շրջան	բնակարանի գնում	0.58
		բնակելի տան կառուցում	0.00
		բնակարանի վերանորոգում	1.01
6	Հաղրուքի շրջան	բնակարանի գնում	0.00
		բնակելի տան կառուցում	0.05
		բնակարանի վերանորոգում	0.26
<b>Ընդամենը</b>			<b>82.07</b>

**6.2 Հիփոթեքային վարկերի կանխավճարների նպատակային փոխառությամբ տրամադրում**

Սույն ենթաձրագիրը ենթադրում է քաղաքացիների որոշ նպատակային խմբերի կողմից, ինչպես նաև առաջնային շուկայից բնակարան ձեռք բերելու դեպքերում՝ հիփոթեքային վարկերի ստացման համար անհրաժեշտ կանխավճարի մասնակի տրամադրմամբ, պետական ֆինանսական աջակցության ցուցաբերում:

2009 թվականին առաջնային շուկայից բնակարան գնելու նպատակով թվով 4 քաղաքացու տրամադրվել է նպատակային անտոկոս փոխառություն ստանալու երաշխավորագիր, ընդհանուրը 8.29 մլն դրամ գումարի չափով, որը կազմում է ձևակերպվող հիփոթեքային վարկի կանխավճարի 50%-ը:

**6.3 Հիփոթեքային վարկավորմամբ իրացնելու նպատակով բնակարանների /առանձնատների/ կառուցում**



ք. Ասկերան, Ն. Ստեփանյան 10դ1, 10դ2

Հաշվի առնելով ԼՂՀ շրջկենտրոններում բնակարանաշինարարության ոլորտում մասնավոր ներդրումների բացակայությունը և նպատակ ունենալով նպաստել բնակարանների առաջնային շուկայի ձևավորմանը՝ հիմնադրամը սույն ծրագրի շրջանակում 2008 թվականից միջոցներ է ձեռնարկել Ասկերան քաղաքում երկու, Հաղրուք քաղաքում մեկ 9 բնակարանոց, Մարտակերտ քաղաքում մեկ 18 բնակարանոց բնակելի շենքերի կառուցման, ինչպես նաև Շուշի քաղաքի Նիկոլ Գումանի փողոցում գտնվող թիվ 2, պատերազմի ժամանակ այրված, 64 բնակարանոց բնակելի

շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացման ուղղությամբ:

2009թ. Մարտունի քաղաքում սկսվել են բնակելի թաղամասի կառուցման աշխատանքները, որն ընդգրկում է 7



**առանձնատների կառուցումը:**



Հիմնադրամի կողմից 2008-2009 թվականին վերոնշյալ բնակելի շենքերի կառուցման ու վերանորոգման աշխատանքների իրականացման և ըստ շինարարության օբյեկտների կատարված ծախսումների մասին տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

**Տ ե ղ ե կ ո թ յ ո ճ ն ե ր**  
**Հիփոթեքային վարկավորմամբ իրացնելու նպատակով բնակարանների /առանձնատների/ կառուցման ծրագրի շրջանակում 2008-2009թթ. կատարված աշխատանքների մասին**

Աղյուսակ 9

/հազ.դրամ/	Ասիերան	Շուշի	Հատված	Մարտակերտ	Մարտունի	Ստեփանակերտ		Ընդամենը
						կահույքի ֆաբրիկայի տարածք	ՄԲԸՍ «Շիրակ-Ե»	
Հողատարածքի ձեռքբերում և սեփականության իրավունքի գրանցում	890.85	832.22	265.80	774.87	2550.95	-	595.35	5910.0
Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում	3475.00	8938.00	2144.00	4192.00	22000.00	-	-	40749.0
Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն	240.00	400.00	240.00	320.00		-	-	1200.0
Շինարարության թույլտվության ստացում	100.00	4.00	35.00	70.00	60.00	-	-	269.0
Շինարարական աշխատանքներ՝ կապալի պայմանագրի շրջանակում	240890.32	312592.70	41479.43	99837.36	97232.00	240000	-	1032031.8

Տեխնիկական վերահսկողություն	1927.13	1987.48	28.74	350.59		-	-	4293.9
Բնակարանների ձեռք բերում իրացման նպատակով	-	-	-	-		-	362640.0	362640.0
այլ ծախսեր	51.53	10.27					61.02	122.8
<b>Ընդամենը</b>	<b>247574.82</b>	<b>324764.68</b>	<b>44192.97</b>	<b>105544.81</b>	<b>121842.95</b>	<b>240000</b>	<b>363296.4</b>	<b>1447216.6</b>
<b>2008թվականին</b>	<b>17989.1</b>	<b>115556.5</b>	<b>2628.5</b>	<b>4474.9</b>	<b>0.0</b>	<b>150000</b>	<b>0.0</b>	<b>290649.0</b>
<b>2009թվականին</b>	<b>229585.7</b>	<b>209208.2</b>	<b>41564.5</b>	<b>101069.9</b>	<b>121843.0</b>	<b>90000</b>	<b>363296.4</b>	<b>1156567.6</b>

Ծրագրի շրջանակում ներդրված 1447,2 մլն դրամ գումարից բնակարանների շինարարության համար ներդրումը կազմում է 1083,92 մլն դրամ, որից 793,3 մլն դրամը կատարված է 2009 թվականին:

2009 թվականին հիփոթեքային իրացման նպատակով «Ֆոր Դիրեկշն» ՍՊԸ-ից Հիմնադրամը ձեռք է բերել կառուցման ընթացքում գտնվող 1487,15 քառ. մետր ընդհանուր մակերեսով թվով 21 բնակարան՝ վճարելով 363296.4 հազ. դրամ: Ընդհանուրը 375,58 քառ.մետր մակերեսով 5 բնակարան 2009 թվականին իրացվել է, որից մուտքագրված գումարը կազմում է 97975,3 հազ. դրամ:

## 7. Հիփոթեքային փոխառություններ գյուղաբնակ քաղաքացիներին

Հաշվի առնելով ԼՂՀ գյուղական բնակավայրերում ապրող քաղաքացիների համար բնակարանային պայմանների բարելավման գործող ծրագրից օգտվելու դժվարությունները՝ կապված բանկերի կողմից նրանց վարկավորման գործընթացի հետ՝ հաշվետու ժամանակաշրջանում Հիմնադրամում մշակվել է ԼՂՀ գյուղաբնակ քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման պետական ֆինանսական աջակցության ծրագրի իրականացման կարգը, որը հաստատվել է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2009 թվականի հունվարի 14-ի թիվ 04 որոշմամբ:

2009թ մարտի 24-ին Հիմնադրամի գլխավոր տնօրենի թիվ 07 հրամանով հաստատվել է ծրագրի իրականացման ընթացակարգը: Ծրագիրը 2009 թվականին ընդգրկել է միայն ԼՂՀ Մարտակերտի և Ասկերանի շրջանների գյուղերը: Հիմնադրամի տնօրինությունը հանդիպումներ է կազմակերպել նշված շրջանների համայնքների ղեկավարների հետ և պարզաբանել ծրագրի իրականացման կարգը:



Մարտակերտի շրջ., գ. Կոճողոտ



Ստեղծված աշխատանքային խումբը գործունեությունը սկսել է մարտի 20-ից և մինչև տարեվերջ ծրագրում ընդգրկվել է 44 համայնք: Արտոնյալ պայմաններով նպատակային փոխառությունների տրամադրմամբ ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել 102 ընտանիքի, ընդամենը 132,3 մլն դրամ գումարի չափով:



Ասկերանի շրջան, գ. Իվանյան

Ծրագրի շրջանակում իրականացված աշխատանքների արդյունքները ներկայացված են ստորև դիտարկված աղյուսակում.

**Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր**

**ԼՂՀ գյուղաբնակ քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման պետական ֆինանսական աջակցության ծրագրի իրականացման մասին**

Աղյուսակ 10

Հ/հ	Շրջանը	Դիմողների թիվը	Ընդունված հայտերի քանակը	Մերժված հայտերի քանակը	Հաստատված հայտերի		Ֆինանսավորված հայտերի	
					քանակը	գումարը /հազ. դրամ/	քանակը	գումարը /հազ. դրամ/
<b>1</b>	<b>Ընդամենը, այդ թվում՝</b>	<b>266</b>	<b>138</b>	<b>9</b>	<b>121</b>	<b>172990.0</b>	<b>102</b>	<b>132270.0</b>
1.1	Ասկերան	141	73	5	66	99140.0	52	70520.0
1.1.1	գնում	7	2	0	2	1900.0	2	1900.0
1.1.2	վերանորոգում	134	71	5	64	97240.0	50	68620.0
	ընդգրկված համայնքների թիվը	20	17		17		15	
1.2	Մարտակերտ, այդ թվում	125	65	4	55	73850.0	50	61750.0
1.2.1	գնում	9	3	0	3	4750.0	3	4750.0
1.2.2	վերանորոգում	116	62	4	52	69100.0	47	57000.0

	ընդգրկված համայնքների թիվը	24	21		19		18	
2	Ընդամենը ընդգրկված համայնքների թիվը	44	38		36		33	

2009 թվականին ծրագրի շահառուների կողմից պարտավորությունների կատարման ժամանակացույցերի խախտումներ չեն արձանագրվել: Տրամադրված փոխառություններից մուտքագրված տոկոսը կազմում է 990,5 հազ. դրամ, փոխառությունների մասնակի մարումների ընդհանուր գումարը՝ 10717,0 հազ.դրամ:



Մարտակերտի շրջ. գ.Վանք



Ծրագիրը 2010 թվականին կրնդգրկի նաև ԼՂՀ մյուս շրջանների՝ Մարտունու, Ծուշիի, Հադրութի գյուղական համայնքները:

## 8. Նպատակային ծրագրեր



«Արցախ Ֆրուտ» ՓԲԸ

ԼՂՀ-ում ձեռնարկատիրության զարգացումը խթանելու նպատակով ձեռնարկատիրության պետական ֆինանսական աջակցության տարեցտարի ընդլայնվող ծրագրերի անվանացանկում ընդգրկված նպատակային ծրագրերի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում 100 սուբյեկտների հետ ստորագրվել են նպատակային փոխառության պայմանագրեր՝ 3351,8 մլն դրամ գումարի չափով:

2009 թվականին Հիմնադրամը հիմնադրել է «Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպությունը, որի նպատակը Հիմնադրամի հետ համագործակցող առևտրային բանկերի ֆինանսավորումն է՝ դրանց կողմից տրամադրված հիփոթեքային վարկերի նկատմամբ պահանջի իրավունքի ընդունման

գործարքների իրականացմամբ: Ընկերության կանոնադրական կապիտալի ձևավորման համար հատկացվել է 500 000,0 հազ. դրամ:

Հաշվետու տարում Հիմնադրամը ներքոհիշյալ առևտրային ընկերություններից բաժնետոմսերի ձեռք է բերմանն է ուղղել 337998.5 հազ. դրամ.

- «Արցախ Ֆրուտ» ՓԲԸ՝ 235000,0 հազ. դրամ,
- «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ՝ 29998.5 հազ. դրամ,
- «ՊՐՈՖՄԵՏ»՝ 73000,0 հազ. դրամ:

## 9. Մոնիթորինգ

Հիմնադրամը դիտարկումների միջոցով վերահսկողություն է իրականացնում շահառուներին տրամադրված ֆինանսական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման նկատմամբ: Պարբերաբար իրականացվող դիտարկումները հնարավորություն են տալիս գործնականում ուսումնասիրել նաև ծրագրերի որակական ցուցանիշները, երևան հանել դրանց արդյունավետ իրականացմանը խոչընդոտող գործոնները, որոնց հաղթահարմանն ուղղված միջոցների ձեռնարկմամբ պարբերաբար կատարելագործվում են հիմնադրամի աջակցության ծրագրերը:

2009 թվականին նախատեսված էր փաստացի դիտարկումների միջոցով հիմնադրամի վերահսկողության ծառայության կողմից իրականացնել հիմնադրամի՝ ձեռնարկատիրության ֆինանսական աջակցության ծրագրերի շրջանակներում թվով 185 շահառուների տրամադրված ֆինանսական միջոցների օգտագործման նպատակայնության ստուգման աշխատանքներ:

Իրականացվել է 168 գործարար ծրագրերի մոնիթորինգ, որոնց բաշխվածքը ըստ ոլորտների և ԼԳՀ շրջանների ներկայացված է թիվ 11 աղյուսակում:

168 գործարար ծրագրերի մոնիթորինգի արդյունքներով արձանագրվել է 130 գործարար ծրագրերով ստացած վարկերի նպատակային օգտագործման փաստ, 28 տնտեսավարող սուբյեկտ ստացել են գրավոր նախազգուշացում՝ գործարար ծրագրով նախատեսված աշխատանքները թերի կատարելու համար: Տարեկան տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման աջակցությամբ ստացած վարկի ոչ նպատակային օգտագործման պատճարով դադարեցվել է 10 շահառուների՝ գործակալ բանկերի կողմից տրամադրված վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորումը:

**Տեղեկություններ  
դիտարկման ենթարկված գործարար ծրագրերի՝ ըստ գործունեության ոլորտների և  
ԼՂՀ շրջանների բաշխվածության մասին**

Աղյուսակ  
11

Հ/Հ	Վայրը Ոլորտը	ք.Ստեփանակերտ	Ասկերանի շրջան	Մարտունու շրջան	Մարտակերտի շրջան	Հարություն շրջան	Շուշիի շրջան	Ընդամենը
1	Առևտուր	10	2	4				16
2	Ծառայություն	15	4	7	1	1	5	33
3	Արտադրություն	16	9	6	1	2	1	35
4	Խաղողագործություն, պտղաբուծություն		12	10	4	6		32
5	Անասնապահություն		13	8	8	3	8	40
6	Չկնաբուծություն		2		1			3
7	Թռչնաբուծություն			1				1
8	Այլ	3	2	1	2			8
	<b>Ընդամենը</b>	<b>44</b>	<b>44</b>	<b>37</b>	<b>17</b>	<b>12</b>	<b>14</b>	<b>168</b>

Վերահսկողության ծառայության կողմից հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է նաև բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարան ձեռք բերելու պետական աջակցության ծրագրի շահառուների բնակարանների վերանորոգման և կառուցման 254 նախնական, 74 ընթացիկ ստուգման աշխատանքներ: Ընթացիկ ստուգման արդյունքներով 17 շահառուներ ստացել են գրավոր նախազուշացում՝ վերանորոգման նախահաշվով նախատեսված աշխատանքները թերի կատարելու համար:

### 10. Հիմնադրամի գործունեության ֆինանսական ցուցանիշները

Հիմնադրամի սեփական կապիտալը 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում էր 4502.2 մլն դրամ:

2009 թվականին Հիմնադրամին ԼՂՀ 2009 թվականի պետական բյուջեից՝ որպես աջակցություն հատկացվել էր 1000,0 մլն դրամ:

Հիմնադրամի հաշվետու տարվա գործունեության արդյունքում ստացված եկամուտը կազմում է 166054.23 հազ. դրամ, որը 77.7%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Ընդ որում՝ հիփոթեքային վարկավորմամբ իրացման նպատակով բնակարանների /առանձնատների/ կառուցման ծրագրից ստացված եկամուտը 3914,54 հազ. դրամ է, տոկոսային եկամուտը՝ 162139.69 հազ. դրամ, որի 3,15%-ը ՓՄՁ ֆինանսական աջակցության ծրագրով նախորդ տարիներին տրամադրված վարկերի տոկոսներն են, 78.53%-ը՝ նպատակային ծրագրերով տրամադրված փոխառությունների տոկոսներն են, 0.65%-ը գյուղաբնակ քաղաքացիներին տրամադրված փոխառությունների տոկոսները, 17.67%-ը բանկային տոկոսավճարներն ու ավանդների տոկոսներն են:

Հաշվետու ժամանակաշրջանում հիմնադրամի ծախսերը կազմել են 677618,94 հազ. դրամ, այդ թվում՝

- հիմնադրամի պահպանման փաստացի տարեկան ծախսերը՝ 121687,6 հազ. դրամ՝ պլանով նախատեսված 146000,0 հազ. դրամի դիմաց,

- ծրագրային միջոցառումների իրականացման ծախսերը՝ 551439,74 հազ. դրամ, այդ թվում՝ ըստ ուղղությունների՝
  1. ՓՄՁ սուբյեկտների առևտրային վարկերի տարեկան տոկոսադրույքների սուբսիդավորում՝ 350933,08 հազ. դրամ,
  2. հիփոթեքային վարկերի տարեկան տոկոսադրույքների սուբսիդավորում՝ 82070,53 հազ. դրամ,
  3. ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի /մատուցվող ծառայությունների/ շուկաներում առաջնորդման աջակցություն՝ 15089,47 հազ. դրամ,
  4. ՓՄՁ սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն՝ 362,0 հազ. դրամ,
  5. ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն՝ 1921,95 հազ. դրամ,
  6. գյուղաբնակ քաղաքացիների հիփոթեքային փոխառությունների ձևակերպման ծախսեր՝ 1874,4 հազ. դրամ,
  7. ներգրավված միջոցների տոկոսների վճարում՝ 99 188,62 հազ. դրամ,
- այլ ծախսերը՝ 4491,57 հազ. դրամ:

2009 թվականին Հիմնադրամի ֆինանսական միջոցների մուտքերը կազմել են 10266091,9 հազ. դրամ, որի 44,75%-ը՝ 4594276,93 հազ. դրամը, կազմում են մուտքերը՝ տրամադրված վարկերի ու փոխառությունների վերջնական և մասնակի մարումներից, այդ թվում՝ ՓՄՁ ֆինանսական աջակցության ծրագրի շրջանակում տրամադրված վարկերի վերջնական և մասնակի մարումներից՝ 395611,5 հազ. դրամ, նպատակային ծրագրերով տրամադրված փոխառությունների վերջնական և մասնակի մարումներից՝ 4188014,0 հազ. դրամ, գյուղաբնակ քաղաքացիներին տրամադրված փոխառությունների մասնակի մարումներից՝ 10651,43 հազ. դրամ: Դրամական մուտքերի 9,74%-ը կազմում են մուտքերը պետական բյուջեից, 2,53 %-ը՝ իրականացրած գործունեությունից՝ ներառյալ տոկոսային եկամուտները, 42,97%-ը՝ ներգրավված միջոցներն են:

2009 թվականին Հիմնադրամի ֆինանսական միջոցների ելքերը կազմել են 10603388,83 հազ. դրամ, այդ թվում՝ նպատակային ծրագրերով տրամադրված փոխառությունների ընդհանուր գումարը կազմում է 7194625,14 հազ. դրամ, որի 52,68%-ը ՓՄՁ ՋԱԿ հիմնադրամից ներգրավված փոխառության հաշվին տրամադրված փոխառություններն են: ՓՄՁ ֆինանսական աջակցության ծրագրի շրջանակում տրամադրված փոխառությունների գումարը կազմում է 42728,7 հազ. դրամ, գյուղաբնակ քաղաքացիներին տրամադրված հիփոթեքային փոխառությունները՝ 132270,0 հազ. դրամ, հիփոթեքային վարկավորմամբ իրացնելու նպատակով բնակարանների /առանձնատների/ կառուցման ծրագրով ներդրված գումարը՝ 1156567,54 հազ. դրամ:

2009 թվականին Հիմնադրամը «Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի ձևավորման համար հատկացրել է 500000,0 հազ. դրամ, առևտրային ընկերությունների բաժնետոմսերի ձեռքբերմանն է ուղղել 337998,5 հազ. դրամ:

Հիմնադրամը ներգրավված միջոցների գծով ձևավորված պարտավորությունների կատարմանն է ուղղել 660768.62 հազ. դրամ:

Հիմնադրամի սեփական կապիտալը 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 4711,3 մլն դրամ, որը կազմում է Հիմնադրամի ակտիվների 53,3%-ը:

2009 թվականին Հիմնադրամի ֆինանսական հոսքերի մասին տեղեկությունները ներկայացված են թիվ 12 աղյուսակում:

Հիմնադրամի՝ ըստ գոյացման աղբյուրների, ֆինանսական միջոցների և դրանց՝ ըստ ուղղությունների, տեղաբաշխման մասին տեղեկությունները բերված են թիվ 2 հավելվածում:

**Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր**  
ֆինանսական միջոցների հոսքերի մասին

Աղյուսակ 12  
/հազ. դրամ/

<b>Մնացորդը առ 01.01.2009թ.</b>		<b>391194.02</b>
ՀՀ	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ, այդ թվում՝</b>	<b>10266091.90</b>
1	<b>ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ</b>	<b>1000000.00</b>
2	<b>ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ</b>	<b>4411700.00<sup>1</sup></b>
3	<b>ՍԱՐՈՒՄՆԵՐ ՏՐԱՍԱԳՐՎԱԾ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ</b>	<b>4594276.93</b>
	<i>վերջնական մարում</i>	<i>111864.83</i>
	<i>մասնակի մարում</i>	<i>283746.70</i>
	<i>նպատակային ծրագրերից</i>	<i>4188013.97</i>
	<i>գյուղաբնակ քաղաքացիներին տրամադրված փոխառություններից</i>	<i>10651.43</i>
4	<b>ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, այդ թվում՝</b>	<b>162139.69</b>
4.2	<b>Տոկոսներ՝</b>	<b>133490.58</b>
	<i>տրամադրված վարկերից</i>	<i>5102.84</i>
	<i>նպատակային ծրագրերից</i>	<i>127331.79</i>
	<i>գյուղաբնակ քաղաքացիներին տրամադրված փոխառություններից</i>	<i>1055.95</i>
4.1	<b>Տոկոսներ՝ բանկային ավանդներից</b>	<b>27632.17</b>
	<i>հիփոթեք</i>	<i>15885.42</i>
	<i>ներգրավված միջոցներ</i>	<i>11746.75</i>
4.3	<b>Բանկային տոկոսավճար</b> <i>/հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկված/</i>	<b>1016.95</b>
5	<b>ԻՐԱՎԱՆԱՅՐԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ</b> հիփոթեքային վարկավորմամբ իրացնելու նպատակով բնակարանների /առանձնատների/ կառուցման ծրագրի շրջանակում.	<b>97975.28</b>
5.1	<i>ծախսերի հատուցում</i>	<i>94060.74</i>
5.2	<i>եկամուտ</i>	<i>3914.54</i>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԵԼՔԵՐ, այդ թվում՝</b>		<b>10603388.83</b>
1	<b>ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցություն</b>	<b>42728.70</b>
2	<b>ՓՄՁ սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն</b>	<b>362.00</b>
3	<b>ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն</b>	<b>1921.95</b>
4	<b>ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի /մատուցվող ծառայությունների/ շուկաներում առաջնդմանն աջակցություն</b>	<b>15089.47</b>
5	<b>ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի տարեկան տոկոսադրույքների սուբսիդավորում</b>	<b>350933.08</b>
6	<b>Հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում</b>	<b>82070.53</b>
7	<b>Հիփոթեքային վարկավորմամբ իրացնելու նպատակով բնակարանների /առանձնատների/ կառուցում</b>	<b>1156567.54</b>

8	Հիփոթեքային փոխառություններ գյուղաբնակ քաղաքացիներին	134144.10
8.1	փոխառություն	132270.00
8.2	այլ ծախսեր	1874.10
9.1	Նպատակային ծրագրեր, այդ թվում՝	7194625.14
9.1	ՓՄՁ ՉԱԿ հիմնադրամից ներգրաված միջոցների հաշվին փոխառությունների տրամադրում	3790000.00
10	«Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հիմնադրում	500000.00
11	Առևտրային ընկերությունների բաժնետոմսերի ձեռք բերում	337998.50
12	Պարտավորությունների կատարում, այդ թվում՝	660768.63
12.1	ՓՄՁ ՉԱԿ հիմնադրամի գծով	291138.63
13	Պահպանման ծախսեր	121687.63
14	Այլ ծախսեր	4491.57
<b>Մնացորդը առ 01.01.2010թ.</b>		<b>53897.09</b>

1. Ներ գրված 10 սկզբնական ԱՄՆ դոլարը հաշվարկված է ՀՀ ԿԲ-ի 31.12.09-ի հաշվարկային 379 ՀՀ դրամ փոխարժեքով:

Արցախի ներդրումային հիմնադրամի  
գլխավոր տնօրեն՝

Կ.ԵՍԱՅԱՆ  
02.03.2010թ.